

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ՝ ՆԿԻՐՎԱԾ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ

Փետրվարի 20-ին Արցախի պետական համալսարանում կայացել է ինտելեկտուալ խաղ՝ նվիրված Արցախյան շարժման 32-ամյակին: Մրցույթը նախաձեռնել է պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Քաղաքագիտություն» մասնագիտության ուսանողուհի Լուսինե Օհանյանը:

Ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Աշխեն Ասրյանի խոսքով՝ խաղի նպատակն է ուսանողներին ներգրավել ուսանողական ակտիվ կյանքին, նոր գիտելիքներ հաղորդել, բարձրացնել նրանց ինտելեկտուալ կարողությունները:

Մրցույթի ընթացքում հնչել են ուսանողների իմացական գիտելիքները ստուգող տարբեր ոլորտներից հարցեր, իսկ ավագների խաղի ժամանակ՝ մասնագիտական բնույթի հարցեր:

«Նման մրցույթները հրաշալի միջոց են ուսանողների ժամանցն ու գիտելիքի ձեռքբերումը համատեղելու, միտքը մարզելու, այլընտրանքներ գտնելու, առողջ մրցակցելու և արգելքներ հաղթահարելու համար», - ասել է ուսանողուհի Լուսինե Օհանյանը:



Ինտելեկտուալ խաղի ավարտին մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը, լավագույն թիմի ավագ ճանաչված և ակտիվ մասնակցություն ցուցաբերած ուսանողները պարգևատրվել են պատվոգրերով:

ԱՐԴՅ «ԲԱՆԱՎԵՆԻ ԱՎՈՒՄԲ»-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՆ - ՔՆՆԱՐԿՈՒՄԸ




Արցախի պետական համալսարանում կայացել է «Բանավենի ակումբ»-ի հերթական բանավեն-քննարկումը: Հանդիպմանը ներկա էին տարբեր մասնագիտությամբ սովորող ուսանողներ:

Ակումբի համահիմնադիր Արման Ասրյանի խոսքով՝ բանավենի թեման էր «Համակարգչային քննությունները արտացոլում են ուսանողների իրական գիտելիքները», որի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ու զարգացնել բանավենի մշակույթն ու

թիկան, բարձրացնել ուսանողությանը հուզող հարցերը և քննարկումների միջոցով գտնել լուծման տարբերակները, խթանել ուսանողական կյանքի աշխուժացումը՝ ակումբը ծառայեցնելով որպես դրսևորման հարթակ, ձեռք բերել սոցիալական, կազմակերպական, կոնֆլիկտների լուծման, երկխոսության, թիմային աշխատանքի հմտություններ, ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցերը:

Մրցակից թիմերի անդամները փաստարկներով և հակափաստարկներով ներկայացրել են համակարգչային թեստային և բանավոր եղանակներով ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացի կազմակերպման դրական և բացասական կողմերը, խնդիրները և ներկայացրել առաջարկություններ:

Ուսանողները գոհունակություն են հայտնել քննարկումից՝ նշելով, որ բանավենի օգնությամբ մասնակիցները սովորում են ավելի համոզիչ ու ճարտար խոսել, զարգացնում են հետազոտելու և սուլմնասիրելու ունակությունները:



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝
Սանե Գաբրիելյան,
լրագրություն՝ 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ

Քո ժամանակը
№ 1
ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ
2020

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԿՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ, ԱՄՈՒՐ ՈՒ ԿԱՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ...

Ասում են՝ հայրենասիրությունն ու ազգասիրությունը ամենագորեղ զգացմունքներն են, և հզոր է այն ազգը, որի զավակները գիտեն իրենց պատմությունը, ծանոթ են նախնիների սխրագործություններին և շարունակում են նրանց գործը: Իսկապես, հայն այդպիսին է՝ հզոր իր բանակով և անպարտ՝ ոգու ամրությամբ: Իսկ Արցախյան շարժումը այդ ամենի վառ ապացույցն է:

Պատերազմ հրահրողները երբեք չեն հասկանա, թե ինչ է հայրենի բնօրրանի կորուստը, և թե ինչ է խաղաղությունը պատերազմող ժողովրդի համար:

Խաղաղություն... թանկ մասունք՝ վաստակված հազարավոր զոհերի գնով: Մեղեդային այս բառն այնքան գեղեցիկ է հնչում: Բայց միայն մի արկի պայթյունով խաթարվում է այն: Այնքա՞ն հեշտ է պատերազմ սկսելը և այնքա՞ն դժվար նորից խաղաղությունը վերահաստատելը:

Կարծես անեծք լինի կախված մեր ժողովրդի գլխին. լինելով հաշտ ու խաղաղասեր ազգ, ստիպված ենք լինում դաս տալ մեր թշնամուն, քանի որ նա միշտ ձգտում է իր կեղտոտ մեռած խոթել մեր երկիր և բռնաճակ մեզ վրա: Այդպես եղավ նաև Արցախյան շարժման ժամանակ: Նրանք ուզում են, որ հայը լինի գլխիկոր ու խոնարհ, կարծելով, թե պատմական այդ խայտառակ սխալը պետք է հավերժ մնա: Թշնամին չկարողացավ թմբեցնել մեր զգոնությունը: Ուղղակի զարմացած էին. որտեղի՞ց հային այսքան համարձակություն: Թշնամին ծանոթ չէր արցախցու «հաստակող» բնավորությանը: Խորհրդային միության փլուզումը խթան հանդիսացավ, որպեսզի արցախահայությունը իր բողոքի ձայնը բարձրացնի ի լուր աշխարհի՝ մայր Հայաստանին վերամիավորվելու պահանջով: Սակայն հակառակորդի գառան դիմակի հետևում թաքնված էր ոճրագործի այն տեսակը, որին բնորոշ են եղեռնագործի դավադիր հատկանիշները: Դրանց դրսևորումները Սումգայիթի ջարդերը, Բաքվի կոտորածները, Մարաղայի կոտորածն էին: Եղավ այն, ինչին մենք պատրաստ չէինք, բայց սպասում էինք...

Դա լուկ պատերազմ չէր, այլ գոյամարտ՝ հանուն անկախության իրավունքի, հանուն հայրենի հող ու ջրի և նախնիների վրեժի: Պատերազմը մեծ ու փոքր չճանաչեց, այն



համախմբեց բոլորին: Օրակարգում Արցախի ինքնորոշման հարցն էր դրված: Հայ մարտիկներն իրենց կյանքն անգամ չխնայեցին հայրենիքի համար:

«Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք մեր պատմության վերջին էջը...»

Շատ տեղին է ասել լեգենդար Ավոն: Փաստորեն, մենք նոր էջ բացեցինք հայոց պատմության բազմահատորյակում: Քաջ գիտակցելով «Գիտակցված մահն անմահություն է» հայտնի ճշմարտությունը՝ հայ բաշերը իրենց արյունով եզրագծեցին Արցախի սահմանները: Իսկ հրաշքը կատարվեց 1992թ., երբ ազգի նվիրյալները ազատազրեցին հայոց բերդաքաղաքը:

Աշխարհի գերտերությունների անտարբերությունը հնարավորություն սանձարձակ Ադրբեջանին ևս մեկ անգամ հաղթելու ակնկալիքով շարունակելու կիսատ թողած գործը, վկան՝ Ապրիլյան քառօրյան:

Անկախություն հաստատելու և այն պահանջելու քառուղիներում շատ հայորդիներ զոհվեցին և դարձան վառ հուշ: Այդ հուշերը կփխանցվեն դարեդար մեր պատմության միջոցով: Ցավոք, մենք հարուստ ենք հուշկոթողներով, դրանք մեր սրտի ճիչն ամփոփում են իրենց մեջ, շունչ ու հոգի դառնալով քարի մեջ:

Այլևս չեն ուզում խոսել պատերազմի մասին, թող էլ երբեք մարտի հրաման չհնչի, երկինքը պարզ ու խաղաղ լինի: Բա՛վ է, քաղաքակիրթ աշխարհ, ունկնդիր եղիր արցախցու կանչին:

Երկրին խաղաղություն է պետք, ամուր ու կայուն խաղաղություն...

Լիանա ՄՈՎՍԵՅԱՆ,
հայոց լեզու և գրակ. 2-րդ կուրս

ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ՀԱՅ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ



ԱրՊՅ ուսանողները հաջողություն են արձանագրել ՀՀ ԿԲ կողմից հայտարարված մրցույթում: 2003թ.-ից սկսած ՀՀ ԿԲ -ն բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին խրախուսելու նպատակով հայտարարում է մրցույթ Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակ նշանակելու նպատակով:

ԱրՊՅ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները մշտապես մասնակցում են մրցույթին և արժանանում կրթաթոշակի: 2019-20 ուսումնական տարում մրցույթին հետազոտական-վերլուծական աշխատանք էին ներկայացրել 30 ուսանող, որից 7

ուսանողը՝ ԱրՊՅ տնտեսագիտության ֆակուլտետից:

Մրցույթի վերջնական փուլ են անցել 13 ուսանող, որից երեքը ԱրՊՅ ուսանողներ են՝ «Ֆինանսներ» 4-րդ կուրսի ուսանողուհիներ Մարիա Անտոնովան (հետազոտական-վերլուծական աշխատանքի գիտական ղեկավար ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ եվգենյա Հայրիյան), Անահիտ Թադևոսյանը (հետազոտական-վերլուծական աշխատանքի գիտական ղեկավար տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ Ռուզաննա Մանգասարյան) և մագիստրատուրայի «Կառավարում» 1-ին կուրսի ուսանողուհի Թամար Գրիգորյանը (հետազոտական-վերլուծական աշխատանքի գիտական ղեկավար տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դասախոս Կ. Հովսեփյան):

Աշխատանքները գնահատելով՝ ԿԲ խորհուրդն ամսական 50.000 դրամի չափով 6 ամիս ժամկետով Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակ է սահմանել 4 ուսանողի համար, որից մեկը ԱրՊՅ ուսանողուհի Անահիտ Թադևոսյանն է (աշխատանքի գիտական ղեկավար տ.գ.թ, դոցենտ Ռ. Յա. Մանգասարյան):

ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԷՐԱՋՄՈՒՄ+ ԾՐԱԳՐԻՆ

Հունվարի 28-ից փետրվարի 6-ը Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Թարգմանչական գործ» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Սոֆի Աբրահամյանը մասնակցել է Միացյալ Թագավորությունում կայացած Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագրին:

«Ծրագրի թեման էր «Make a change», որի հիմնական նպատակն էր փոփոխություն մտցնել ինչպես մասնակիցների կյանքում, այնպես էլ տարբեր երևույթների նկատմամբ: Ծրագրի շրջանակում դասընթացներ են վարել խտրականությունից և ծաղրից խուսափելու թեմաներով, կային նաև միջմշակութային երեկոներ, որի ժամանակ մասնակիցները ներկայացնում էին իրենց երկրների առանձնահատկությունները»,- ասել է Սոֆի Աբրահամյանը՝ մեկնելով, որ մասնակիցները տարել էին իրենց երկրների ազգային ուսեստները: Սոֆին էլ տարել էր արցախյան գաթան: Նա նաև մեկ է, որ ծրագրին մասնակցում էին մոտ 40 ուսանող Հայաստանից, Վրաստանից, Թուրքիայից, Ուկրաինայից, Բելոռուսից, Լիտվայից, Իտալիայից:

«Ծրագրից շատ տպավորված եմ, քանի որ կա-



ռուցել ենք միջմշակութային կամուրջ, ձեռք են բերել մոր ծանոթություններ օտարերկրյա հասակակիցների շրջանում, և փորձ՝ հետազայում աշխատելու և մասնագիտական հմտությունները զարգացնելու համար»,- ասել է Ս. Աբրահամյանը՝ հավելելով, որ մեծ ծրագրերին մասնակցելը ընդլայնում է մասնակիցների աշխարհայացքը, նպաստում, որ մարտահրավերներին հեշտ դիմակայեն:

ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆՇԵԼ ԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 151-ԱՄՅԱԿԸ


Արցախի պետական համալսարանում շարունակվում են ամենայն հայոց բանաստեղծ, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 151-ամյակին նվիրված միջոցառումները: Ցերեկույթը կազմակերպվել է մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ: Միջոցառմանը ներկա էին ֆակուլտետի դասախոսներ, ուսանողներ:

Ուսանողները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով բանաստեղծի կյանքն ու գրական գոր-

ծունեությունը:

«Թումանյանն այն եզակի գործիչներից է, ում գրական հարստությունը մույնքան անժխտելիորեն բացառիկ է ու մեծ, որքան նրա մարդկային կերպարը: Թումանյանի կյանքի բազմաթիվ դրվագներ կարծես մեկտեղվում, զուգահեռվում են հայ ժողովրդի ճակատագրի հետ»,- մշել է ուսանողուհի Մելինե Ղալայանը՝ ընդգծելով, որ բանաստեղծն ապրում էր իր ժողովրդի համար բարդ ու դժվար ժամանակներում և ամբողջովին կիսում էր հային բաժին հասած յուրաքանչյուր դառնություն:

ՓՈՐՁՈՒՄՈՒՑՈՒՄ «ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Փետրվարի 3-ից Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Լրագրություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները արտադրական փորձուսուցում են անցնում: Առաջին շաբաթը փորձուսուցում են անցել Արցախի հանրային հեռուստատեսությունում, այնուհետև այցելել հանրային ռադիոընկերություն, «Ազատ Արցախ» թերթի խմբագրություն, «Արցախպրես» լրատվական գործակալություն:

* * *

Ես քեզ փնտրել եմ երկար,
Բայց գիտե՞ս, կարծում եմ՝ կյանքում
Քոնը դու երբեք չես գտնի
Ջբաղված խաչներուկների
Քեզ խորթ թվացող անկյուններում:
Ես քեզ փնտրել եմ երկար,
Բայց գիտե՞ս, հոգնել եմ տարբեր տեղեր մայելուց:
Իմ վազող մարմնի տաք շնչից ես
Դրսի անգուր ցուրտն եմ շատ մոտ ինձ զգում:
Ես քեզ փնտրել եմ երկար,
Բայց գիտե՞ս, քո խաբկանքն այլևս չի ապրում:
Քո ստեղծած քառսն իմ ներսում
Քեզ համար է վտանգ ներկայացնում:
Ես քեզ փնտրել եմ երկար,
Բայց գիտե՞ս՝ որոշել եմ քե՛զ տեսնել իմ տեղում,
Եթե ինձ գտնես, իմաց տուր, որ ես
Մեկ էլ ստեղծեմ խաբկանքն այս ամտես:
Այս կյանքում, երբ որ մեկն իր մաշկին

Գեթ մի ակնթարթ խաբկանքն այս զգա,
Թույլ չի տա իրեն այլոց զգացմունքի հետ վայրկյան
Իսկ խաղա:
Այս կյանքում, երբ որ մեկն իր մատներին
Անգուր ցրտի կարմրոցը որ զգա,
Թույլ չի տա երբեք այլոց մատներին սառնությունն այդ



մի պահ կուչ գա:
Այս կյանքում, երբ որ մեկն իր ստի մեջ՝
Այդ խոր անկյունում մեկին տեղ տա, մեկի արհամարհանքին տեղ գա,
Թույլ չի տա իրեն մույն արհամարհանքով մի օր մեկին պատասխան տա:
Այս կյանքում, երբ որ մեկն իր տան մեջ երջանկությունն այս իսկական զգա,
Թույլ կտա իրեն ուրիշի երջանկության հեղինակ դառնա:

ԱՆԻ ԱԶԱՏՅԱՆ,
անգլերեն լեզու և գրականություն 3-րդ կուրս

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱԼԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 62-ԱՄՅԱԿԻՆ

Արցախի պետական համալսարանի մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է հուշ-ցերեկույթ՝ նվիրված Արցախի հերոս Վլադիմիր Բալայանի ծննդյան 62-ամյակին: Միջոցառմանը ներկա էին ֆակուլտետի դասախոսներ, ուսանողներ:

Ուսանողները իրենց ելույթներում արժևորել են հաղթանակը կերտելու գործում Վլադիմիր Բալայանի ունեցած դերը՝ ասմունքելով հայրենասիրական բանաստեղծություններ:

«Վ.Բալայանը ապրեց իմաստալից ու հերոսա-

կան կյանքով ու դարձավ հավերժի ճամփորդ հանուն Արցախի ապագայի և այն փոքրաթիվ մարդկանցից մեկը, ովքեր ապրում են մահ մահվանից հետո, իրենց ապրած ամեն մի օրով սերունդներ կրթում ու հայրենասիրության դասեր տալիս», - ասել է ուսանողուհի Մելինե Ղալայանը:

Հերոսի հասուն գաղափարների, ազնիվ, մախածոնող բնավորության, հայրենասիրության մասին է խոսել ուսանողուհի Սվետլանա Ավանեսյանը:

Միջոցառման ավարտին ներկաները Վլադիմիր Բալայանի և Լեոնիդ Ազգալոյանի ստեղծած Ազատագրական բանակ գործիավորման և հերոսի սխրագործությունների մասին ֆիլմ են դիտել:

Ա Ր Ե Վ Ա Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր



Մեր տանից տատիկենց տուն տանողը մի բարակ ուղի է: Երկարությունը 100 մետր չի լինի, իսկ լայնությունը...

Շատ մեղ է: Երկու կողմում, հավասար ու խնամված մարգերում

տատիկը ցանում է կարտոֆիլ, լոբի, պոմիդոր, կանաչիներ... իսկ ճանապարհի երկայնքով, իրար շատ մոտ արևածաղիկներ էլ չի ցանում: Աճում էին ու բարձրանում, բարձրանում ու ծաղկում: Որ շատ էին բարձրանում, հենվում էին իրար, ուղին դառնում էր կածան, սիրունանում էր: Արևածաղիկները ցերեկը նայում էին արևին, գիշերը մեզ ու փորձություն էր մուծ ժամանակ անցնել քեզ նայող հսկա արևների միջով: Փորձությունը հաղթահարում էի ամեն օր: Վերադառնալիս տատիկը կանգնում պատշգամբում ու հարցնում էր ամեն անգամ՝ հո չե՞ս վախում: Հայացքով ուղեկցում էր ինձ մինչև երևան լուսավորված դռան առաջ ու ձեռքս թափահարեմ օդում՝ ի նշան իմ գործած սխրագործության... Մի օր տատի միջնորդությամբ ձեռք բերեցի շատ փոքրիկ հողակտոր իր հողամասի ծայրում: Իմ սեփական հողամասը, որ արևածաղիկներ ցանեմ: Նախօրոք թրջած սերմերը միասին ու միանգամից դրեցի հողի մեջ, ջրեցի: Շատ լավ ստացվեց, դեռ ավելին՝ աճեցին: Միասին ու միանգամից: Իմ հողամասում իսկական ծաղկեփունջ էր հասունանում: Երբ բերքահավաքի ժամանակը եկավ, տատի արևածաղիկները տարանք տանիք, իսկ իմ արևածաղիկները կարծես միայն ես էի ուտում... Ծաղկելը նրանց վերջին առաքելությունն էր, սերմերը չէին հասել:

Ճանապարհի 2 կողմում տատիկը արևածաղիկ էլ չի ցանում: Ես էլ: Տարիներ են անցել: Այսօր, երբ

դրսում մե՛ծ փաթիլներով ծյուն է գալիս և պատշգամբից իրար նայողը ես ու երևացող 14 շենքերն ենք՝ իրենց բազմաթիվ անտեմաներով, ինչո՞ւ հանկարծ հիշեցի արևածաղիկները: Մանկության, երագի ու երազանքի գույն, երազային արևածաղիկներ: Դրսում հագած-կապած, շտապող մարդիկ չե՞մ վախենում. այդքան անպաշտպան դուրս եմ եկել տանից: Տեսնես կա՞ մեկը, որ կանգնում է պատշգամբում ու հայացքով ճանապարհում նրանց, որ հարցնում է ամեն անգամ՝ հո չե՞ս վախում և որ արևածաղիկներ ունի: Կամ ծաղկեփունջ: Ինձ թվում է փոքրիկ քաղաքներում սրտերը քիչ-քիչ փոքրանում են ու արդեն դժվար է այնտեղ և մարդկանց, և երազանքներ պահելը: Մարդիկ հազիվ իրենց գլուխն են պահում: Սրտի մասին հոգալու ժամանակ չկա: Այս փոքրիկ, մառախուղի մեջ կորած քաղաքում, մոռացված երազանքերի մեջ քո հոգատար ձեռքերն ինձ ինչքան են անհրաժեշտ, տատ ջան:

Տատը 2 կոնֆետ է ընտրում, իմ ու իր համար: Առավոտ է և օդում հացի բույր կա, սուրճի բույր, վառարանի ծայն: 2 բաժակներում առավոտյան սուրճը չի սառում հակառակ իմ միայնակ խմած բազմաթիվ անգամների: Ի՞նչ տաք է տունը: Միշտ: Տատը անջատում է հեռուստացույցը, նստում կողքիս ու իր հացի նման ձեռքերով վերցնում փոքրիկ բաժակը: Կապույտ աչքերի մեջ առաջվա հանգստությունն է: Ուզում եմ հարցնել. Այդքան փոքրիկ քաղաքում շա՞տ չեն այդքան անտեմաները:

Վառվող փայտի ծայնն էլ չի լսվում, միայն կոնֆետի թղթի ծայն է իմ ձեռքում:

-Տատ, է՛մ արևածաղիկներն ինչո՞ւ էիր իրար է՛մ քան մոտիկ ցանում,- հարցնում եմ:

Մեր տանից տատիկենց տուն տանողը մի բարակ ուղի է: Երկարությունը 100 մետր չի լինի, իսկ լայնությունը... Երկուսուկես ոտնաչափ է: Այսօր չափեցի:

**Արաքս ՄԻՐՁՈՅԱՆ,
լրագրություն 4-րդ կուրս**

ԱրդՊ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ



Փետրվարի 10-ից Արցախի պետական համալսարանում մեկնարկել են առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի պարապմունքները: Բանասիրական, մանկավարժության և սպորտի ֆակուլտետներում պարապմունքները կկազմակերպվեն 1-ին հերթով, իսկ տնտեսագիտության, բնագիտության, պատմության և իրավագիտության ֆակուլտետներում՝ 2-րդ հերթով:

«Ուսանողները բավականին ժամանակ են ունեցել հանգստանալու և ուժերը վերարտադրելու համար, ակնկալում են, որ ամենայն լրջությամբ կմոտենան ուսումնական գործընթացին և գիտելիքի ձեռքբերումը կդառանա գերնպատակ», - ասել է տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը՝ հավելելով, որ երկրորդ կիսամյա-

կում մասնագիտական կրթական ծրագրերում ավելի շատ ընդգրկված են ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացներ, գործնական պարապմունքներ և ընդգծել, որ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ուսանողների գործնական հմտությունները զարգացնելու խնդիր ունեն:

«Նոր կիսամյակի սկիզբը հնարավորությունների մեծ շրջանակ է ստեղծում վերագնահատելու գիտելիքի կարևորությունն ինչպես անձնական աճի, այնպես էլ մեր պետության զարգացման ու հզորացման գործընթացում», - ասել է գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Շուշան Խաչատրյանը՝ ընդգծելով, որ կրթության ոլորտում համաշխարհային զարգացումներն այսօր հավաստում են, որ կրթական համակարգի որակի և արդյունավետության բարձրացմանը միտված ծրագրերն այլընտրանք չունեն, ու ցանկալի արդյունքին հասնելու համար կարևորված է յուրաքանչյուրի ակտիվ մախածոնողականությունը:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ինեսսա Առուստամյանի խոսքով՝ ուսումնական պարապմունքները ընթանում են բնականոն հունով և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը:

«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԴՊ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Փետրվարի 19-ին Արցախի պետական համալսարանի հոգեբանական կենտրոնում ՈՒՇՀՅՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը հանդես է եկել դասախոսությամբ՝ «Հոգեբանական աշխատանքի կազմակերպումը և բովանդակությունը» թեմայով: Հանդիպմանը ներկա էին մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դասախոսներ, ուսանողներ:

Վ. Յարամիշյանը մանրամասն ներկայացրել է թեմայի հասկացությունները, մակարդակները: Խոսելով հոգեբանական աշխատանքի ուղություններից մեկի՝ հոգեբանական խորհրդատվության մասին՝ բանախոսը նշել է, որ այն պարզաբանում է հոգեբանական դժվարությունները, կանխարգելում ճգնաժամային իրավիճակները, որն իրականացվում է վստահության փոստի, համացանցի միջոցով:

«Հոգեբանական ուսուցումը չպետք է շփոթել



դաստիարակչական աշխատանքի հետ: Հոգեբանական ուսուցումը և լուսավորությունը հոգեկան երևույթների, բացասական հոգեվիճակների մասին պատկերացումներ ստեղծելը, հոգեբանական գիտելիքներ տալը, մարդկանց հետ հարաբերվելու ձևերի մշակումն է», - ասել է պրոռեկտորը՝ հավելելով, որ այն իրականացվում է զրույցների, թրեյնինգների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ:

ՄԵՆՔ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՆՔ, ՈՄԱՆՔ՝ ՆՈՒՅՆԻՍԿ ՇԱՏ

Գիրք ընթերցելը երևի թե ամենաօգտակար զբաղմունքն է, երբ ունես ազատ ժամանակ: Նախ ընդլայնվում է բառապաշարդ, հետո՝ մարդկանց հետ զրուցելու նոր թեմաներ են ունենում: Թեմայի շրջանակներում զրուցեցինք լրագրություն 3-րդ կուրսի ուսանողուհի Շողեր Սարգսյանի հետ:

-Շողե՛ր, ի՞նչ տեղ է գրավում ընթերցանությունն այսօր քո կյանքում:

-Հակառակ այն կարծրատիպին, որ երիտասարդները գիրք չեն ընթերցում, շտապեմ ուրախացնել ավագ սերնդի բոլոր անհանգստացած ներկայացուցիչներին՝ մենք ընթերցում ենք, ոմանք՝ նույնիսկ շատ: Եթե ազնվությամբ, չեմ կարող ասել, որ ամբողջ ազատ ժամանակս տրամադրում եմ ընթերցանությանը, ապրում քաղաք-գրադարանում և շփվում միայն թղթի վրա ապրող հերոսների հետ: Գրքերն այսօր իրականությունից թաքնվելու և այդ նույն իրականությունն ավելի փորձառու վերադառնալու իմ ամենասիրած միջոցն են:

-Ինչպիսի՞ գրքեր են նախընտրում ձեռք բերել և կարդալ:

-Տանը ունենք մեծ գրադարան, որ երկար տարիների ընթացքում հարստացվել է մեր ընտանիքում հայկական և ռուսական դասական գրականության սիրահարների ջանքերով: Իսկ ես այսօր գրադարանը հարստացնում եմ հիմնականում արտասահմանյան ու ժամանակակից գրականությամբ: Ձեռք եմ բերում ամենատգեղ կազմով, բայց ամենախոստումնալից հեղինակների գրքերը:

-Հիշու՞մ ես քո կարդացած առաջին գիրքը կամ ո՞րն է վերջին կարդացած գիրքդ: Ինչպիսի՞նքն էին տպավորություններդ:

-Ձոնել Հարիսի «Քեռի Ռիմուսի հեքիաթները» գրքի և տատիկիս անսահման համբերության շնորհիվ սովորել եմ ընթերցել: Ամեն նոր գլխի վերնագիրը ընթերցելը իմ առաջին պատասխանատու հանձնարարությունն էր: Քեռի Ռիմուսը սովորեցրեց, որ սրամտությունը դժվարությունների դեմ ամենաօգտակար գործիքն է:

«Փոքրիկ իշխանը» երևի թե առաջին գիրքն էր, որ ընթերցել եմ ինքնուրույն: Սկսել եմ ընթերցել Վարդգես Պետրոսյանի «Հավասարում բազմաթիվ անհայտներով» հրապարակախոսությունների ժողովածուն: Միրում եմ գրողի գրական լեզուն և մոտեցումը կյանքին: Նա կարծես մշտական խորհրդատու լինի: Խորհուրդները ավելի շատ ընկերական են, տալիս են ընտրություն կատարելու անձնական ազատություն:

-Գրքում ի՞նչն է առաջին հերթին քո ուշադրությունը գրավում:

-Թեման, խնդիրը, իրավիճակը կամ տրամադրությունը, որ փորձում է պատմել ինձ



հեղինակի ձեռագիրը: Ես ընթերցում եմ նաև սովորելու համար: Ավելի նախընտրելի է Ուայլդի գեղեցիկ բայց բարդ բառընտրությունը և հերոսները, որոնց ապրումակցում ես, քան Կոելիոյի պարզունակ լեզուն և ինչ-որ տեղ արդեն

ասված ու լսված պատմությունները:

-Կարո՞ղ ես կիսվել հետաքրքիր պատմությանից կապված գրքերի և ընթերցանության հետ:

-Հեսսեյի «Դեմիան»-ից աննկարագրելի տպավորված լինելը ստիպել է ինձ գնել նրա «Տափաստանի գայլը»: Երկու անգամ: Հայերեն և ռուսերեն թարգմանությամբ: Երբ ոգևորվածությունս փոքր ինչ անցավ, առավել ակնհայտ էր դառնում, որ մի գիրքը ավելի քան բավական էր: Եվ հայերեն տարբերակը մնում էր իր գեղեցիկ փաթեթավորման մեջ, չբացված, պարզապես որովհետև ես զգում էի, որ գիրքը ինձ համար չէ, բայց նաև հասկանում, որ ընկերներիս համար այն լավ մկեր չի լինի՝ իր բովանդակային յուրատիպության պատճառով:

Գիրքը նվիրեցի ինձ անծանոթ մի երիտասարդի երիտֆորումներից մեկի ժամանակ, երբ վիճակահանության կապույտ թերթիկը ստիպեց ինձ լինել նրա գաղտնի ընկերը: Նվերս հասավ ոչ առանց միջնորդների օգնության: Իսկ ահա նրա ոգևորված արծագանքը ստացա ավելի արագ: Պարզվեց, որ նոր նա ընթերցում էր այն գիմակցի հետ ծառայության ընթացքում: Ծառայությունը ավարտվեց, սիրած գիրքը մնաց իր ընկերոջ մոտ: Շատ երկար սպասելուց հետո իմ գիրքը գտավ իր իրական ու արժանի տիրոջը:

-Ինչպիսի՞նքն է քեզ համար հետաքրքիր գիրքը: Այն ընթերցելուց հետո ինչպիսի՞ հարցեր են առաջանում քեզ մոտ:

-Ես ուզում եմ ընթերցել գրքեր, որ նորություն կլինեն ինձ համար, կստիպեն մտածել ու պատկերացնել բոլորովին նոր իրավիճակներ: Կամ կբացահայտեն հիմք՝ անսպասելի տեսանկյուններից ու նոր մոտեցմամբ: Գիրքը հետաքրքիր է, երբ այն հանդգնում է քեզ ապրումակցել: Հետաքրքիր գիրքը նաև ստիպում է քեզ մի քիչ փոխվել:

-Կա՞ մի այնպիսի գիրք, որ խորհուրդ կտայիր ընթերցել հասակակիցներիդ և ինչու՞:

Գուցե Ալեքսանդր Վոլկովի «Ջմրուխտ քաղաքի հրաշագործը»: Այն հեքիաթ է, բայց ունի անհրաժեշտ ուղերձ 16-20 տարեկան երիտասարդներին՝ եղբ փոքր ինչ ավելի ինքնավստահ: Դուք կարող եք ավելի ին, քան երբևէ պատկերացրել եք: Հավատացեք ինքներդ ձեզ:

Հարցազրույցը՝ Նանե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, լրագրություն 3-րդ կուրս

ԱՐՊՅ-ՈՒՄ ՆՇՎԵԼ Է ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Փետրվարի 21-ը նշվում է որպես մայրենի լեզվի միջազգային օր: Օրվա առթիվ Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ավագ դասախոս Ժենյա Պողոսյանը կազմակերպել է միջոցառում, որին ներկա էին տարբեր ֆակուլտետների դասախոսներ, ուսանողներ:

Մասնակիցները հանդես են եկել մայրենի լեզվին ձոնված կատարումներով՝ ասմունք, երգ՝ ելույթներով անդրադառնալով տոնի պատմությանն ու խորհրդին:

Ժենյա Պողոսյանը արժևորել է մայրենիի դերը հայ ժողովրդի գոյությունը և հավատը պահպանելու գործում՝ նշելով, որ փոխվել են ժամանակները և կյանքի հարափոս ռիթմը ի հայտ է բերել հաղորդակցման բազում միջոցներ: Այսօր հայության զգալի մասը հաղորդակցվում է օտարատառ հայերենով, ինչը վիրավորական է մայրենի լեզվի և տառերի հանդեպ:



«Լեզուն յուրաքանչյուր ազգի ինքնակերտման կարևորագույն գրավականներից է, նրա գոյության վկայագիրը: Մեր ժողովրդի համար մայրենի լեզուն ազգապահպան նշանակություն ունի ինչպես հավատքը, մշակույթն ու ընտանիքը», - ասել է ուսանողուհի Ֆլորա Բարսեղյանը:

Ներկաները իրենց ելույթներում կարևորել են նաև միջոցառումների կազմակերպումը:

ԱՐՊՅ-ՈՒՄ ՆՇՎԵԼ Է ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐԸ



Փետրվարի 19-ին՝ Ամենայն հայոց բանաստեղծ Պոլիանես Թումանյանի ծննդյան օրը, Արցախի պետական համալսարանում նշվել է գիրք նվիրելու տոնը: Միջոցառումը կազմակերպվել է ԱրՊՅ գիտական գրադարանի և բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ:

Ներկաներին ողջունել է գիտական գրադարանի վարիչ Հասմիկ Հարությունյանը՝ նշելով, որ գիրք նվիրելը միշտ էլ հաճելի է երեխաների և մեծահասակների համար: Գիրքը հոգևոր և մշակութային արժեք է, իսկ ընթերցելը՝ ժամանակակից:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 151-ամյակի և գիրք նվիրելու օրվա առթիվ ներկաներին շնորհավորել է գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ., դոցենտ Ջարինե Սառաջյանը. «Հայ ժողովուրդը գրքի հանդեպ մշտապես պաշտամունք է ունեցել, նույնիսկ ցեղասպանության տարիներին հայ մայրը իր զավակին հավասարազոր փրկել է գիրքը կործանումից»:

Արժևորելով բանաստեղծի գրական գործունեությունը՝ նա նշել է, որ գրողն այսօր արդիական է իր ստեղծագործություններում արծարծած գաղափար-

ներով, խնդիրներով: «Նրա ստեղծագործական ժառանգության առաջին իսկ գործերից մինչև վերջինը համերաշխության, հումանիզմի կոչեր են, և այսօր առավել ևս արդիական են այդ կոչերը, քանի որ պայքարում ենք ոչ միայն արտաքին թշնամու դեմ, այլև ներքին միասնություն ստեղծելու համար», - ասել է Ջ. Սառաջյանը՝ ընդգծելով, որ եթե յուրաքանչյուր մարդ իր մեջ գոնե մի կտոր Թումանյան պարեցնի և ապրի համամարդկային արժեքներով, երկրի հաջողությունները ավելի շատ կլինեն:

«Գիրքը ոչ միայն գիտելիքների, այլև մարդկային բոլոր արժեքների աղբյուր է, որի շնորհիվ մարդկությանը սերնդեսերունդ փոխանցվում են ամենասուրբ գաղափարներն ու արժեքները», - ասել է գիտական գրադարանի աշխատակից Ստելլա Աբրահամյանը և ընդգծել, որ բոլոր ժամանակներում առաջադեմ մարդկության ամենաարժեքավոր նվերը գիրքն է:

Միջոցառման ընթացքում ելույթներ են ունեցել նաև ընթերցասեր ուսանողները՝ խոսելով գրքի նշանակության մասին և ասմունքել իրենց նախընտրած բանաստեղծություններից:

Ուսանողուհի Տաթև Ղահրամանյանը ժամանակակից տեխնոլոգիական զարգացման դարաշրջանում էլ նախապատվությունը տալիս է գրքերին. «Գրքի մեջ կենդանություն կա, այնտեղ թափառող մի ոգի կա, որ անընդհատ մեզ հետ է, իսկ էլեկտրոնային տարբերակով կարծես ինչ-որ բան խանգարում է նույն ջերմ շփումը ստեղծելու համար», - ասել է ուսանողուհին՝ հավելելով, որ գիրքը մի աշխարհ է, որտեղ ներթափանցելու համար ո՛չ ժամանակը, ոչ էլ տարածությունը չեն կարող խթան լինել:

Ակտիվ ընթերցողները գիտական գրադարանի կողմից պարգևատրվել են գրքերով: